

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ**(ԽԵԻ) ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ**

= 22 =

ԽՐԱՏ ՊԻՏԱՆԻ.— 7**Ա.**

Թէ ըսկի չըկայ սուրբ վարդապետ, մեզ սուրբ զըրօք խրատ տուէր,
Մահն հերիք է մեզ խրատ, որ կենդանի զոր չէ թողեր:

Բ.

Ոչ թագաւոր եւ ոչ իշխան, թ ունին հարիւր հազար հեծել,
Ոչ քահանայ և ոչ ճգնաւոր, ոչ մեծատուն և ոչ տառապել:

Գ.

Տեսայ հզաւր մեծ թագաւորքն յերկու կանկուն տեղ պառիկել,
Այն աշխարհիանցում լեզուն ոչ նըշմարանքնն չէ մնացել:

Դ.

Այն փափկանունդ մարմին նըման գիշոյ մըխզայ հոտել,
Բակէր զաւդուածըն մարմնոյն, մնացեր փրտած կողն ի փայտեր:

Ե.

Տեսայ զիշխանքն եւ զմեծատունքն, որ ահագին քան զչափն ի վեր,
Նա տէր չէին երկու փողու, իւրենքն երկու փող չին արժել:

Զ.

Որ ասէր ես եմ Սողոմոն, նայ մըջման էր հնազանդել,
Նայ ոտանցըն լուանին, և աչքըն հողով էր լըցուէր:

Է.

Տեսայ զհզաւր քաջ մանկտընին, որ զգազանքնին սասընցուցեր,
Նայ չունին ճանճի մի ուժ, ոչ առուտուր և ոչ ալ խօսիլ:

Ը.

Տեսայ զհարսունքն եւ զփեսանին, գեղեցկութիւնն էր գնացեր,
Եւ ի վերայ գերեզմանին սարդին իւրեն ոստէն հինէր:

Թ.

Մայրն որ տընէր ի հետ տղաին, վայ իմ որդեակս է շատ լացեր,
Ի մէկ տապանին պառիկեր, այլ տղային գիրկ չէր ածեր:

Ճ.

Եւ յԱդամայ մինչեւ ի քեզ զինչ որ ծըներ ամէն մեռեր,
Թէ կայ ի քեզ իմաստութիւն զայդ ի մտացդ մի հաներ:

ԺԱ.

Զայս էր տեսեալ սուրբն Գրիգոր, անծամբ ըզանծն ի խաչ հաներ,
Սուրբ Յակոբ զայս իմացաւ, շատ սգնութեանց զանծն տուեր:

ԺԲ.

Դիտացեալ զայս Անտոնիոս որ ի լերինքն զփախն առնէր,
Ծանեաւ եւ զայս Քօղ սգնատուրն, զկին եւ զտունն ի բաց թողեր:

ԺԳ.

Եւ յամենայն սուրբ կշռեցին, եւ ի յոյնչ են համարեր,
Եւ ամենայն որ զայս զիտէ, վայ յիմարին որ չի զիտեր:

ԺԴ.

Խեւ Յովանէս Քլզուրանցի հաստատ ցուցեր արինակեր,
Ջանայ փախիր ի յաշխարհէս, արինակացդ լեր ընկեր:

= 23 =

Խ Ր Ա Տ Պ Ի Տ Ա Ն Ի. — 8

Ա.

Աչքն որ հայի զգործն Աստուծոյ, նայ մտաց աչաւքն է ի կոր,
Ունկն որ չսէ զբանն Աստուծոյ, էշ է անբան, չէ բանաւոր:

Բ.

Բերանն որ չէ արհնարանող, նայ իժ եւ բարբ է թիւնաւոր,
Ջեռքն որ յառնուին է յաջողակ, եւ տուրբ չունի, փայտ է նայ չոր:

Գ.

Եթէ կարդայ ւ ի միտ չառնու, ւ իւր կարգալուծն չէ զիտնաւոր,
Համարեայ թէ էշ է բարձած թէպէտ գրանք թէպէտ փայտ չոր:

Դ.

Միտքն որ չքննէ զարն մահուն, ինքն լինի իւրն դատաւոր,
Նայ ի մեղաց մէջն մեռեր, ինքն իւր անծինն է ննկաւոր:

Ե.

Զայս ամենայն տուրբ եւ բարիք, զոր երկնայինն եւ զերկրաւոր,
Տես զարեգակն եւ ըզլուսին, զաստեղաց զիրբքն լուսաւոր:

Զ.

Նայեաց յերկիր չորքոտանիք, զբոյս եւ զհարս թեւաւոր,
Ջոր վասն մեր ազգիս մարդկան, ետ Արարիչն սպասաւոր:

Է.

Անչափ քան զայս անթիւ բարիք, զոր խոստացեր մեզ ընդաւոր,
Ջորն ճաշեն եւ զոր զգնուն, զորն ի դարման մեզ կերակուր:

ԺԲ. — 1. — Ջեռ. Անտիոնոս... լերիքն:

Բնագիր, Դ. էջ 141:

Ա. — 1. — հայի — թերեւս պիտի ըլլար չհայի:

Է.

Թէ զայս յիշես եւ զոհանաս, ասես միայն եւ թագաւոր,
Քեզ վայելէ փառք եւ պատիւ, զոչ ես հրգաւր եւ զաւրաւոր:

Թ.

Նայ կերպարանքդ դեղծուրի, հանեալ ի պարտն զլիւաւոր,
Ոչ տեսանես եւ ոչ լըսես, եւ ոչ առնուս բան կարելոր:

Փ.

Եւ զինչ երեստ ողորմութիւն, ի մէնջ խնդրէ բան հոգեւոր,
Աղաւթասէր ւ աղքատասէր, եւ երկիւղած հաւատ բոլոր:

ԺԱ.

Թէ զայս ունիս աստէն ի քեզ, անդէն լինիս այլ փառաւոր,
Փրկիս ի հրոյն յաւիտենից, լինիս լուսոյն արժանաւոր:

ԺԲ.

Յովանէս լըցեալ մեղաւք, բանդդ խըրատ է հոգեւոր,
Թէ լսես զործէ կատար, պահես ի միտ զաւրն ահաւոր:

= 24 =

ԽՐԱՏ ՊԵՐՍԱՆԻ. — 9

Ա.

Է ամբարիշտ թշուառական, է թշնամի արդարութեան,
Ի բարութիւն փոփոխական, ի մեղքն անշարժ եւ մնացական:

Բ.

Մեղաց խոնարհ քաղցրաբարբառ, յարդարութիւն ամբարտաւան,
Անօթ զինոյ ւ արբեցութեան, զերի հազարչառնիկ կնկան:

Գ.

Առաքինի ես խաս եւ խայծ, ժամ մի խրատող ժամ մի զուսան,
Խառնափնդոր յարդարութեան, բան խառն ի խուռն զործ անպիտան:

Դ.

Ո՛վ է տեսեր մեղր ու կարագ խառնի յիրար եւ դեղ մահուան,
Կամ ո՛վ լըսել չար եւ բարի, լոյս եւ խաւար կալ միաբան:

Ե.

Ով ծառայեաց յերկու տէրանց, արքայութեան չեղիւ արժան,
Ոչ հայրապետ, ոչ քահանայ, ւ ոչ զլիւաւոր աշխարհական:

Զ.

Անծն իմ յԱստուած ես յուսացել, թէ ողորմած ես զըթական,
Թէ զոչ չդառնաս քեզ ողորմիս, նայ ով լինի քեզ քաւարան:

Է.

Որ յԱղամայ չողորմեցաւ, որ պատուիրել էր պատուիրան,
Վասն միոյ ճաշակելոյն, եւ ի դրախտէն եղեմական:

Ը.

Այս արինակ մեղաւորաց, որք մեղանչեն եւ ոչ դառնան,
Երթան ի հուրն յաւիտենից, ի բոցն անշէջ եւ անվախճան:

Թ.

Զաւրըն զաշխարհս խորատես, դարձիք յԱստուած որդիք մարդկան,
Քո քարոզիդ յէ՞ր չես լսել, է ցընդամիտ անկուշտ զազան:

Ճ.

Գինին ու գուսանն ապականէ, շատ իմաստուն եւ զիտնական,
Այդ է քո գործ զաւրհանապազ, այտ որ չունիս դարձ եւ խափան:

ՃԱ.

Թէ միտ ունիս զաւրըն մահուան, եւ զկոչումն ի դատաստան,
Զըսպառնալիքն եւ զգեհենին, ունիս փափաք արքայութեան:

ՃԲ.

Այսիւ զերծիս ի տանջանաց, գտանես սակաւ տեղ հանգըստեան,
Հայ Յովանէս Թլգուրանցի, թէ քո խրատուդ կենաս հաւան:

= 25 =

ԽՐԱՏ ՊԻՏԱՆԻ ԵՒ ԱԻԳՏԱԿԱՐ.— 10

Ա.

Է ամբարիշտ է՝ մարդ աչար, դէմ սուրբ գրոց ես կոյր եւ յոյլ,
Մեղաց գրոց արի եւ ժիր, յարդարութիւն հեղզ եւ ծոյլ:

Բ.

Մեղաց կողմին բազմածընունդ, յարդարութեան կողմն ես ամուլ,
Վիշապ գազան ես մընացեր, չըկայ ի քեզ մարդոյ ուսուլ:

Գ.

Ծերացար սպիտակ ալեաւք ըտկաւ մնացեր ես գալ ի փուլ,
Ողորմութիւն իսկի չունիս, զըրկես զաշխարհս տալ ու յառնուլ:

Դ.

Տես թ ինչ եղաւ բոլոր աշխարհս, զնացեր կ'երթայ ամէնն ի փուլ,
Զինչ թագաւոր կայր եւ իշխան, մահըն տարաւ զամէնն ի կուլ:

Ե.

Աւր յարութեանըն մերձեցաւ, Աստուածաշունչ զիրն ի լընուլ,
Քրիստոս յերկնից գայ փառաւք Հաւր Գաբրիէլի փողն ի հարուլ:

Զ.

Աջակողմեանըն ուրախանան, զանանց պըսական առ ի զգենուլ,
Զախակողմեանըն կորընչին, խաւար զգեստիւք քան զայծ եւ զուլ:

Է.

Յաստէնս արայ հոգոյդ ճարակ, գործէ բարի զմեղքն ի թողուլ,
Տուր աղքատին, զգեցոյ մերկին, զաչըդ պահէ՛ զունկդ ի հընուլ:

Ը. — 2. — 2եռ. անվաղջանն:

Թնագիր, Դ. էջ 144:

Գ. — 1. — 2եռ. սպիտակաւաւք: ըտկաւ — տակաւ? սակաւ?:

Դ. — 1. — 2եռ. ի փուլ:

Ը.

Թէ ուզես զերծիլ ի հրոյն, դիւին մի տար ըզքեզ ի կուլ,
Խըրատողին մեղաց համար պարտ է յերեսըն թըրընուլ:

Թ.

Խեւ Յովանէս Թլգուրանցի, զումրի թութաւ ես եւ բլպուլ,
Մարմնաւորի ես փոյթ ի գործ, հոգեւորի ես շիլ եւ զուլ:

= 26 =

ԲԱՆ ԶՂԶԱԿԱՆ. — 11

Ա.

Մի մնար տարակոյս եղբայր սիրելի,
Թէ բանի չեմ հմուտ նայ գիրս է բարի

Բ.

Ես բոլոր եմ անծամբ ի մէջ զեհենի,
Կարաւտ եմ ձեզ ասել ինձ տէր ողորմի:

Գ.

Ես ասեմ ճանապարհն որ ես զընացի,
Ըզչարիքն յանցանաց որ ես գործեցի:

Դ.

Ես մեղայ Հաւրըն սուրբ ւ Որդւոյն միածնի,
Սուրբ Հոգոյն որ անեղ եւ անբննելի:

Ե.

Առաջի հրեշտակաց զըւարթնոց մեղուցի,
Երկնայնոց ւ երկրայնոց, ծովի ցամաքի:

Զ.

Հըպարտ իմ, սնափառ իմ, նըման սատանի,
Կեղծաւոր մարդայիսաբ նըման Սիմոնի:

Է.

Նախանձոտ չկամաւոր եղբայր ատեցի,
Ընդ բարին չարացայ եւ բամբասեցի:

Ը.

Ծուլութեամբ հեղգացայ զաղաւթն ատեցի,
զԱրարիչն Աստուած ես հո[գով չա]րեցի:

Ը. — 2. — 2 եռ. յերըն:

Թ. — 2. — 2 եռ. մարմնաւոր:

Բնագիր, Դ. էջ 145:

Վերնագիրը մենք զրինք, 2 եռագրին մէջ նշանակուած էր կարմրագիր. «նրին յովի»
Այլ եղ 400, այսինքն՝ Նորին Յովանիսի, այլ եղ անակաւ:

Է. — 2. — 2 եռ. չարաց:

Ը. — 2. — 2 վերջին բառերը մասամբ ցեցակեր են:

Թ.

Շատ ըսկսա ի բարին, և ի ծայր չհանի,
Ի բարի գործն եմ ծոյլ, և ի չարն եմ արի:

Ճ.

Բարկութեամբ ես մեղայ նման Կայենի,
Քան ըզգեստ փրփրկո՞ծ վրտակ դիզեցի:

ՃԱ.

Հայհոյել յիշոցօք մարդիք գանեցի,
Յիմ սըրտէս ես չհանգայ, զայլ որ չհանգուցի:

ՃԲ.

Ուր հասայ խըլեցի զրկողս ամենի,
Ի յառնուլն յաջող տալըն չերեւի:

ՃԳ.

Շընացայ, ցանկացայ, որդն ծնուցի,
Վառեցի անշէջ հուր, որդն ոչ մեռանի:

ՃԴ.

Խորհրդով եւ մըտաւք զիս աղտեղեցի,
Շողմոզել ճոխ կենաւք զհոգիս մեռուցի:

ՃԵ.

Զպատուիրանն որ եղիր Տէրն ոչ պահեցի,
Ըզբանքարն որ յանձնեաց նայ զայն թաքուցի:

ՃԶ.

Յոյս ունիմ զմեղայն ծայն անլուելի,
Բարեխօս առ Քրիստոս զԿոյսն երանելի:

ՃԷ.

Իւր ձեռացն եմ ստեղծուած պատկեր ցանկալի,
Ողորմած է չթողու ի ձեռք Սատանի:

ՃԸ.

Յովանէս խել անդարձ զիմըս ծանուցի,
Ըզչարիքս իմ ծածուկ ի յայտ կացուցի:

(8)

Ն. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ

